

ՏԱՍՆԱԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբարբաբերը դիմում են ուղղակի
Տիֆլիս. Pechanin «Musa»

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն: Ինչ եղաւ մշակների
ընկերութիւնը: Նամակ երկանից: Ներքին լուրեր:
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր:
—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ: —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: —ՅԱՅՏԱՐԱՐՈՒ
ԲՈՒԹԻՒՆՆԵՐ: —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ղարաբաղի
աստղագէտը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչ եղաւ ՄԱՍԿԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Մի ազգի գլխավորը յիշէ քանակութեամբ և թէ յատկութեամբ կազմում է
մշակ, բանուր դասը: Մշակ դաս ասելով
հասկացվում է ազգի այն մասը, որ օրա-
կան ծանր աշխատանքով հայթայթում է
իր ապրուստը:

Գումարատէրը իր ապրուստը հայթայ-
թելու տեսակետից նայելով, բանուրից դա-
նազանվում է նրանով, որ առաջինը կա-
րող է առանց ծանր աշխատանքի, իր գու-
մարի միջոցով ստանալ այնքան օգուտ,
չափ, որով կարելի է մի քանի գերդաստան-
ներ ապահովել, իսկ բանուրը ամբողջ օրը
արիւն—քրտինք մանելով, հազիւ կարողա-
նում է իր և իր ընտանիքը չքաւորութիւ-
նից ազատել:

ՂԱՐԱԲԱԳԻՐ

Ա Ս Տ Ղ Ա Գ Ի Տ Ը

—Այդ հետ է ասել, բայց դժուար է կատա-
րել, Զուգուրդ, դու չես խնայում, որ քո վարմուն-
քով պիտի աղմկես Ղարաբաղի խաղաղութիւնը:
Ես ճանաչում եմ Թալիշի մէկընքին. նա պատուա-
պահութեան պայմանների մէջ չափազանց խիստ
է: Մեր բոլոր պատճառաբանութիւնները նա կըն-
դունէ որպէս վիրաւորանք, և պատերազմը այնու-
հետեւ կը բարդանայ: Նրա և մեր մէջ: Միացած մէ-
կըները ստիպված կը լինեն բռնել՝ ումանք մեր,
ոմանք նրա կողմը, և Ղարաբաղը կը դառնայ
ներքին արեւահեղութեան ամօթալի մի հանդիսա-
բան:

—Եթէ Թալիշի մէկընք խելացի մարդ է, նա
պէտք է բաւականանայ, երբ իրանից ներդրու-
թիւն կը խնդրեն: Իսկ եթէ ոչ, թող չնորժ բերէ
մեզ մօտ, մենք նրա ստրուկները չենք. մենք ա-
զատ մարդիկ ենք. և զենքը կը վճռէ դործը...

—Իհարկէ, այդպէս է: Բայց մենք հազիւ թէ
կարող ենք յոյս դնել յաղթութեան վրա, երբ
ինքներս ենք պատճառ տալիս պատերազմի:
Զուգուրդ, լաւ մտածիր, թող երկուստեքդ կան
աշխոյժը չը հրապուրէք քեզ. դործը վերաբերում է
ամբողջ Ղարաբաղի խաղաղութեանը:

—Ես հասկանում եմ ձեր բոլոր ապացոյցների
կարեւորութիւնը, այսու ամենաշինի, չեմ կարող
ամուսնանալ Թալիշի մէկընքի դատեր հետ, որով-
հետեւ չեմ կամենում անբարոյանքներ նրան...

—Ինչ կա խոստում դու:
—Բոլորովին ուղիղ է իմ ասածը: Պատկերվում
ինձ համար վարդը նշանադրված հարսնացուի
հետ, ես կարող եմ միայն ասել նրան, ցանկալ
նրան՝ մահ և կորուստ...

—Ինչ սոսկալի խորհուրդ է թագնված այդ
խօսքերի մէջ, գոչեց մէկընք տեղից վեր թռչելով:
—Ու պէտք է այդ զարդանիքը յայտնես ինձ:

—Այդ ես չեմ կարող, սառնասրտութեամբ
պատասխանեց Զուգուրդը:

Բանուր դասին պատկանում են, երկրա-
գործները, գործարանների բանուրները,
ինքնուրոյն արհեստներով պարագողները,
բեռնակիրները և այլն:

Վաճառականները իրանց կեանքը ապա-
հովում են մշակ դասակարգի արդիւնաբե-
րութիւնները մի տեղից միւս տեղ անց-
կացնելով, տեղափոխելով, և այդ միջոցով
դու թեւեւ համար են ստանում իրանց
վարձը: Դառնայողները, ուսուցիչները, բժիշկ-
ները և առհասարակ հասարակութեան
ամբողջ ինտելիգենցիան, կերակրվում են
մշակների կողմից ձեռքերի աշխատանքով:
Ուրեմն մի ազգի ֆիզիկական կեանքը պահ-
պանվում է մշակ դասով և որովհետեւ ա-
ռանց տնտեսական ապահովութեան, ֆի-
զիկական առողջ կեանքի, անկարելի է
մոտաւոր և բարդական կեանքը, անկարելի
է հասարակութեան գոյութիւնը և հաս-
տատ առաջադիմութիւնը, այդ պատճառով
մեր գլխավոր ուղադրութիւնը պէտք է
գրաւէ մշակ դասի տնտեսական ապահո-
վութեան խնդիրը և մենք, առ այժմս,
վերջիններիս համար պէտք է անենք այն,
ինչ որ կարող ենք:

Բայց մենք մեր կարողութեան չափ էլ
չենք կամենում գործել, կամ եթէ կամե-
նում ենք էլ, դարձեալ չենք անում: մենք

—Հա, դու չես յայտնի, որոտաց մէկընք ասելի
կատարութեամբ:—Ինչ յիշար եմ եղել ես, որ
իդուր խօսքեր եմ վառում մի համարի հետ,
երբ կան ուրիշ շատ միջոցներ ստիպելու նրան,
որ հնազանդվի:

—Մտաբերեցէք, մէկընք, որ ես մահից երկիւղ
չունեմ, ասաց Զուգուրդը, իր նստած տեղից
կանգնելով:

—Դու երկիւղ չունես մահից, գոչեց մէկընք
բարկութեամբ:—Լաւ, լաւ: Բայց դու այնպէս
չուտ չես մեռնի, որքան էլ ցանկանալու լինէիր:
Ես կը ծանօթացնեմ քեզ այնպիսի մահուան հետ,
որը հազարապատիկ տաժանալի է, քան թէ խ-
կական մահը...

—Բռնեցէք դրան, հրամայեց նա նօթարներին,
—կաշկանդեցէք շղթաներով և բանտարկեցէք
աշտարակի ստորերկրեայ նկուղի մէջ, որ գտն-
վում է գետի մօտ: Տունեցէք դրան միայն ցամաք
հաց և ջուր, թող սովորի, թէ ինչ է նշանակում
հայրենիքի խաղաղութիւնը վերջով իր դարտակ
յամատութեամբ:

Նօթարները տարան Զուգուրդին, որը սե-
նակից դուրս գալու միջոցին, խիստ սառն կեր-
պով ասաց իր ճօրհնը:

—Դուք դրանով ոչինչ չեք շահվի:

Մէկընք բարկութիւնից սաստիկ յուզված, նրա
տեց գորդի վրա: Մի քանի րոպէ մնաց լուռ-
թեան մէջ: Այդ միջոցին սաստիկ ծանգրտա-
կերպով նայում էր նրա վրա, կարծես, աշխա-
տում էր գուշակել, թէ ինչ է կատարվում նրա
սրտի մէջ: Վերջը մէկընք դառնալով նրան, սաս-
տիկ տհաճութեամբ ասաց.

—Դե, պարոն ստախոս, ձեր միացին քո այն
բարեյակող աստղները, որոնցով հրապուրում էիր
ինձ:

—Նրանք կային, բայց անցան, մէկընք: Միթէ
ես չառաքի ձեզ, որ նրանց ետեւից կը գնա վատ
աստղեր: Ո՛վ խորհուրդ տուեց ձեզ՝ շարունակել
ձեր խօսակցութիւնը: Ես միայն չը ցանկացայ
խանդարել ձեր երկար ճառախօսութիւնը, թէ չէ,
արդէն պարզ տեսնում էի վնասակար աստղների
մօտենալը: Եւ ես չեմ զարմանում, որ Զուգուրդը
այսպէս յամառ գտնվեցաւ:

—Ուրեմն քո կարգադրութեան համեմատ ես

ծոյլ եմք, զիւրազրդիւ, զուրկ հաստատ
կաճեցի: Մենք սկսում ենք եռանդով մի որ
և է դործ, բայց անցնում է մի երկու ա-
միս և մեր եռանդը սառչում է, շարունա-
կում ենք գործը ակամայ, հետեւապէս և
թոյլ կերպով: Այնուհետեւ մենք մեզ ար-
դարացնում ենք մեր խղճի և հասարակու-
թեան առջև հասարակական մի քանի
դժուար պայմաններով:

Չորս թէ հինգ ամիս սրանից առաջ շատ
ուրախացանք, երբ լսեցինք մեր հասարակ
ժողովրդի կողմից մի շատ զովելի ցանկու-
թեան համար, մէկընք մշակների ընկերու-
թիւնը դիտաւորութիւն ունէր հիմնել Թիֆ-
լիսում մշակների մի փոխադարձ օգնութեան
ընկերութիւն: Այդ ժամանակ այդ գործի
մէջ միջամտեց Թիֆլիսի հայոց «Գարեգոր-
ծական» ընկերութիւնը, առաւ մշակների
ձեռնարկութիւնը իր հովանաւորութեան
տակ: Բայց գործը այնքան երկարացաւ, որ
այժմ այլ ևս ոչինչ չենք լսում այդ ընկե-
րութեան մասին: Մշակները, ինչպէս երե-
ւում է, իրանց յոյսերը կարեցին այդ օգ-
տաւէտ գործից:

Շատ ցանկանալի էր տեղեկանալ ի՞նչ է
մտածում ի՞նչ է անում մեր «Գարեգործա-
կան» ընկերութիւնը մշակների ընկերու-
թեան կազմակերպութեան համար, ցան-

քանի րոպէ պիտի խօսեի Զուգուրդի հետ, որ
լաւ լինէր: Ա՛խ, խաբեքանք, այդ է ձեր նշանա-
ւոր դիտութիւնը: Եւ ես, անխելքս, հաւատացի
քեզ: Վարելի է, դու յիմարութեամբ քո բոլոր
թւանջանքները չփոխեցիր միմեանց հետ: Եւ ես
քո տխմար դուշակութիւնների համեմատ, փոխա-
նակ լաւ րօպէին, ընտրեցի վատ րօպէս իմ եղ-
բորորդու հետ խօսակցելու համար: Եւ այդ պատ-
ճառով նրա հետ կովեցայ, նրա հետ, որին ես
սիրում եմ ասելի քան մի հարազատ որդի: Գու-
հա պատճառը այդ բոլոր երկպառակութեան
—Խօսիր, անպիտան, շարունակեց մէկընք, կա-
տարութեամբ բռնելով աստղագետի մօրթընք,—
հիմա ինչ ես նախադրեալում քո համատեղու-
թիւնների քեզ համար:

—Նրանք նախադրեալում են իմ աղաովելը
կորուստից, ասաց աստղագետը դողդողալով:

—Նրանք խաբում են քեզ, պատասխանեց մէ-
կընք, և դառնալով դէպի նօթարները, հրամայեց.

—Վեր առեցէք այդ ցնորվածին, ձեռքեք դրան
մի և նոյն ստորերկրեայ ներքնատան մէջ, որտեղ
այժմ նստած է իմ եղբոր որդին: Թող երկու խե-
ղաղանք միմե միման չհեքայներ պատմեն...

Աստղագետին տարան:

Մէկընք կրկին նստեց գորդի վրա, հրամայեց
իրան տալ դէյլան և սկսեց լուռութեամբ ծխել:
Նրա աչքերը արտայայտում էին սաստիկ յուսա-
հատութիւն և ոչ որ տանեցիներից չէր համար-
ձակվում մօտենալ նրան:

III.

ՁՈՒՄԵՆՈՒԹԻ ՅԱՄԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Նկզ, միմի, ստորերկրեայ բանտում, շղթայա-
կապ որպէս մի յանցաւոր, նստած էր Զուգուրդը:
Բանտի խոնավ պատերը երբեք չէին զգացել Ղա-
րաբաղի բոցալուրտ արեգակի բարեբար ազդեցու-
թիւնը: Այդ մշտական տխրութեան նկուղը ծա-
ռայում էր միայն որպէս բնադարան կարիճների,
մամուկների (փախանգ) և հազար այլ տեսակ
զգուղի սողունների համար: Վախենալով մարդու
ներկայութիւնից, նրանք սողացին պատերի վրա-
յով և թաքնվեցան ձեռքերի մէջ, որոնք գոյա-
ցել էին խոնավութիւնից և ժամանակի հոտութիւ-
նից: Լուսնային դիտակի ազմուղը, որը վաղու

կալի է իմանալ ի՞նչ եղաւ մշակների մոտ-
գրված ընկերութիւնը: Սպասում ենք:

Մ. Բ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Սեպտեմբերի 13-ին

Ամեն մի լուսաւորեալ երկրում իզական սե-
ռը կատարում է այն դերը հասարակական գոր-
ծերում, վարում է շատ այնպիսի պաշտօններ,
որ մեզ մօտ իրաւունք ունի կատարել միայն
արական սեռը: Օրինակ. Եւրօպայում շատ ան-
գամ թէ ընտանեկան և հասարակական գործե-
րում յաճախ երեւում են կանայք, որոնք գործերի
բնագրաւման, ինքնաշարժի են լինում: Շատ ան-
գամ, ինչպէս փորձը ցոյց է տալիս, իզական սե-
ռի մասնակցութեամբ գործը անելի արագ և ա-
ջող առաջ է դնում: Այդ, իհարկէ, եթէ լինի մեր
հայրիս մէջ, ասելի միջոցաւոր և ուրախալի
կը լինի. բայց հակառակն ենք գտնում: Օրինա-
կէ համար վեր առնենք Նիւսնը և նկարագրելով
նրա իզական սեռի գործունէութիւնը, թէ հասա-
րակական և թէ ընտանեկան կեանքում, տեսնենք
ինչքան է օգուտ տալիս նա այժմ ու ինչքան կա-
րող է օգուտ տալ:

Ձէ կարելի ուրախալ, որ Նիւսնում կան զար-
գացած կանայք և օրիորդներ, որոնք կարող են
գործել, նպաստել հասարակական գործերին, բայց
ինչու նոքա չեն գործում, կամ եթէ գործում են
էլ, ինչու առական սեռից բոլորովին անջատված:
Այդ կարելի է վերաբերել, մեծ մասամբ, մեր իզա-
կան սեռի դեռ նախապետական սովորութիւննե-
ր ուղիղ նկուղի մօտով, ասելի ես բազմապատ-
կում էր այդ խաւար բանտի դարձուրանքը: Բայց
Զուգուրդը, երկի, էջը գրում իր դրութեան բոլոր
տաժանութիւնը, չէր զգում շղթաների ծանրու-
թիւնը, որոնցով կաշկանդված էր ինքը: Նրա
դէմքը արտայայտում էր խորին ցնծութիւն, կար-
ծես թէ, ձեռքերը մեկնած, մէկին ողջունում էր
նա, այսպէս բացականչելով.

—Սալիհա, սքանչելի, անուղագիտան, անգին
Սալիհա, ո՛վ աստուածային կոյս, ես քեզ եմ
պատկանում, քեզ միայն, մինչև յաւիտեան: Ոչ
ոչ, ոչ ճակատագիրը, ոչ մարդիկ մեզ բաժանել չեն
կարող: Ես կը կուգեմ բոլոր անախորժութիւննե-
րի դէմ, բոլոր թշուառութիւնների դէմ, և ասելի
բարեւը կը համարեմ ոչնչաւոր, քան թէ դաւաճա-
նել այն երկմանը, որ տուել եմ քեզ: Բայց ինչպէս...

Նրա խօսքը ընդհատեց մի աղմուկ, որ լսելի
եղաւ բանտի մօտից: Դրանք բացվեցան, նօթար-
ները ներս հրեցին աստղագետին, կրկին կողպե-
ցին դռները և հեռացան:

Զուգուրդը սկզբից չը կարողացաւ ճանաչել,
թէ այդ ինչ նոր ընկեր էր, որ բերեցին իր հա-
մար: Բայց լսելով նրա զանգարանները, որով մը-
միթում էր նա, ճանաչեց, որ դա պէտք է լինէր
մի և նոյն աստղագետը, որին իր ճօրհնայրը
հաւատում էր: Նա մտածեց, որ դա պէտք է մի
տեսակ խորամանկութիւն լինէր, որ գործ էր
գրված, այդ խաբեքայի միջոցով համոզելու իրան,
ընդունել հօրեղբոր առաջարկութիւնը: Այդ պատ-
ճառով երկուստեք լուռ կացաւ, ուղադրու-
թիւն չը դարձնելով իր նոր դրացու վրա:

—Ո՞ղջ էք դուք, մէկընք-Զուգուրդ, վերջապէս
հարցրեց աստղագետը երկուստեք ձայնով:

—Կարծեմ դուք ոչինչ հարկաւորութիւն չունէք
իմ մէջ, պատասխանեց նա:

—Ինչպէս չունեմ, միթէ դուք կարծում եք, որ
ես չեմ ցաւում ձեր դրութեան վրա:

—Խորհուրդ եմ տալիս ցաւել ձեր մասին:

—Ճշմարիտ, մէկընք, ձեր հօրեղբայրը սաստիկ դու-
րազգիւ մարդ է, քան բոլոր մարդիկը, որոնց ես
ճանաչում եմ այս աշխարհում: Մէկը հարցնելիս
լինի, թէ ինչու համար նա ետեւից մեզ այդ ստո-
րերկրեայ վիրապի մէջ, ուր շատ հեշտութեամբ
կարելի է կարիճների կերակուր դառնալ:

(Կը շարունակվի)

Հարուստիւմ ենք ստանալ Կ. Պօլսի մէջ հրա-
տարակից (Բուրաստան մանկանց) մանկական
ամսագիրը: Այդ ամսագիրը պատկերները շատ գե-
ղեցիկ և նուրբ կերպով փորագրված են լինում,
բայց ափսոս որ ամսագրի լեզուն ու ոճը ամե-
նաանճոռնի է: Դասը, անհասկանալի, անմատչե-
լի, խառնաշփոթ ոճի հետ, ամսագիրը միացնում
է պոլսեցիներին յատուկ հայոց արեւմտեան բար-
բառի սխալ տառագրութիւնը, որի պատճառով
խորհուրդ չենք տալիս տարածել այդ ամսագիրը
մեր ուսանող մանուկներին մէջ, քանի որ այդ
տեսակ տառագրութիւնը մեր մանուկներին ար-
տասանութիւնը կատարելապէս կը փչանայ ու
կանճոռնանայ: Նրանք կը սովորեն, օրինակի
համար, փոխանակ Կ օ լ ու մ ք ո ս, որ ուղիղ է և
համապատասխան է եւրօպական ճիշդ արտասա-
նութեան, աղաւաղած կերպով, (ըստ «Բուրաս-
տանի») արտասանել Գ օ լ ու մ ք ո ս, և այլն:

Մեզ հաղորդում են որ Թիֆլիսի Ս. Կապիթի
Թաղի Նազօրնայա փողոցի մի տան մէջ բնակ-
վող երկու վրացի եղբայրներից մինը սեպտեմ-
բերի 27-ին միւս եղբորը սպանել է դանակով:
Սպանողը իր յանցանքը գործելուց յետոյ, ինքն
անմիջապէս յայտնում է այդ անցքը պօլիցիային
և կալանաւորուում է:

Մեզ գրում են ՎԱՍԱՐՇԱՊԱՏԻՑ հետեւալը,
սեպտեմբերի 24-ից: «Վեհափառ Կաթողիկոսը
այս երեք օր է այն աստիճան ծանր հիւանդ է,
որ բժշկը դիւրեւ ցերեկ վեհաքանից չէ դուրս
գալիս: Միաբանութիւնը խառնված ու չփոքված
գրութեան մէջ է վեհափառի հիւանդութեան
պատճառով:

Նոյն տեղից մեզ գրում են: «Հետ հաւանա-
կան է որ վաղաքապատի տղայոց ծխական դպ-
րոցը այս տարի գոյութիւն չի ունենայ, քանի որ
ձեռնարանի տեսուչ, Արշակ Նազապետեան, բաց
անելով ձեռնարանի վարժոցը, տարաւ այդ դպրո-
ցից մեծ մասը աշակերտների և նրանցով կաղ-
մակերպեց վարժոցը: Այդ վարժոցը լինում է
այժմ պատճառ ծխական դպրոցի փակվելուն:
Ձարմանալի ձգտում ունի այժմ ԼՂՄԻԹԻՆԵՐ ղեկ-
կենտրոնացումը, հակառակ այն ուղղութեան, ու-
րին հետեւում էր հանդուգնալ Մատթէոս կաթո-
ղիկոսը, այն է ապակիստօնացմանը ուսումնա-
րանական գործի մէջ, որ և բարեբար ազդեցու-
թիւն ունեցաւ մեր դպրոցական գործի ծաղկման
վրա: Լաւ չէր անի, արեւելք, պ. Նազապետեանը,
եթէ նա ժողովէր աշակերտներին այնպիսի դի-
ղերից, որտեղ ուսումնաւորան ամենեւին չը կայ:

ԲԱԳՈՒՅԻՑ մեզ գրում են: «Այս օրերս սպա-
սում ենք այստեղ Սափրապետի թատրոնական
խմբին: Խումբը ունի, ինչպէս երեւում է երեք
դերասանուհի և հինգ դերասան:

Նոյն տեղից մեզ գրում են որ «Մարդասիրա-
կան ընկերութեան» գրադարանը մինչև այժմ չէ
ստանում «Վարժարան» մանկավարժական ամսա-
գիրը, բայց Մօսկվայի ու Ս. Պետերբուրգի ծաղ-
րական թերթերը ստանում է:

Մեզ հաղորդում են որ Բագուի մէջ դիտաւո-
րութիւն կայ մի հայերէն շաբաթաթերթի հրատա-
րակել: Ինչպէս լսել է մեր թղթակիցը, մի պա-
րոն յանձն է առնում շաբաթաթերթի վրա լի-
նէի ղեկիցը:

Լսում ենք որ Թիֆլիսի ՍՈՒՄ բանդը մի քանի
մէկի հայ մշակներ, իրանց մէջ հանգանակելով
մի յայտնի գումար, գնել էին Մոսկ քաղաքից ոչ
հեռու գտնվող իրանց գիւղի եկեղեցու համար մի
ղանգակ, որ և պատրաստվում էին ուղարկել յի-
շալ գիւղը: Բայց Թիֆլիսի թիւրքաց կոնսուլը,
որ ինքն հայ-կաթողիկէ է, տեղեկանալով հայ մը-
շակների այդ աստուածահաճոյ գործի մասին,
կանչեց հանգանակողներին, հրամայեց բերել իր
մօտ գնված զանգակը և կալանաւորեց յիշալ
ղանգակը ու հանգանակված փողի մնացորդը որ
մշակները դիտաւորութիւն ունէին գործ գնել զա-
նակի ճանապարհածախսի վրա:

Անդրկովկասեան հայ-կաթողիկէների և անդրկով-
կասեան հայ-բողոքականների մէջ նշմարվում է
այժմ նորոգման շարժումը: Ինչպէս մեր հայ-

կաթողիկէները խնդրագիր են ներկայացրել կառա-
վարութեանը, որ նրանց թոյլ տրվի ունենալ ի-
րանց սեփական հայ-կաթողիկէ եպիսկոպոս Անդր-
կովկասում, որպէս զի նրանք այլ ևս կալված
չը լինեն Սարատովի լատին եպիսկոպոսի իրաւա-
սութեանը, նոյնպէս և Անդրկովկասեան հայ-բո-
ղոքականները, երբ նորերումս, Մօսկվայի լուծե-
րական կոնսիստորիայի գլխաւոր (գեներալ-սու-
բէրինտենդէնտ) Թիֆլիս էր կեւծ մի քանի օրով,
գիմեցին նրան, խնդրելով որ միջնորդի միջնա-
րութեան մօտ, որ անդրկովկասեան հայ-աւետա-
րանականներին, որոնք արդէն հինգ հազար հոգու
չափ են մեր երկրում, թոյլ տրվի պաշտօնապէս
անուանվել հայ-աւետարանական եկեղեցի և ու-
նենալ իրանց սեփական հայ-աւետարանական
կոնսիստորիա Համալսում, կատարելապէս անկախ
Մօսկվայի գերմանական բողոքական կոնսիստո-
րիայից: Ասում են, որ գեներալ-սուբէրինտենդէն-
տը, ի նախի առնելով որ հայ-աւետարանական-
ները բաւական բազմաթիւ են արդէն Անդրկով-
կասում, խոստացաւ իր կողմից ամեն ջանք անել
միջնորդելու համար կենտրոնական կառավարու-
թեան մօտ, որ աւետարանական հայ եկեղեցին
ճանաչվի անկախ Մօսկվայի գերմանական կոն-
սիստորիայից և իրաւունք ստանայ ունենալ իր
կենտրոնական անդրկովկասեան հայ-աւետարա-
նական կոնսիստորիա Համալսում մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Յունաց թագաւորը, սեպտեմբերի 27-ին, ըն-
դունեց ֆրանսիական միջնորդ-նախագահ Գիւ-
կէրիին: Նրանք մէկ ժամից աւելի խօսակցում
էին միմեանց հետ: Միւս օրը թագաւորը այցելեց
արտաքին գործերի մինիստրութիւնը, ուր բաւա-
կան երկար նստեց: Նոյն օրը, երկուցեան յու-
նաց թագաւորը և թագուհին ճանապարհ ընկան
Փարիզից դէպի Հռոմալից, իսկ այնտեղից կու-
ղերովին դէպի Գաւառէն:

— Սերբիական կառավարութիւնը լիազօրու-
թիւններ տուեց նախկին մինիստր-նախագահ Նի-
կօլա խրիստիչին և Վալիկիս ուղարկեց նրան ա-
ւագլխութիւնը քննելու համար:

— Կայրէից հեռագրում են սեպտեմբերի 20-ին:
Ձինտրական դատարանին նախապէս բոլոր
բանտարկեալները, որոնք թուում Մարքի և Տու-
րի, մէկ տան մէջ կը տեղաւորվեն, ուր կը
կայանան զինուորական դատարանի նիստերը:

— Կայրէից հեռագրում են սեպտեմբերի 19-ին:
Երէկ հասաւ այստեղ Բէկեր-փաշա և խեղովը ըն-
դունեց նրան: Գեներալ Երկ վերադառնում է
Անգլիա, որ օդին կառավարութեանը Եգիպտոսի
ժամանակաւոր գրաւումն կանոնաւորելու մէջ:

— Վարդաց արդէն ենթադրում էին, որ հակա-
սեմիտական շարժման գլխաւոր դրոշմը իշխան
Բիսմարկն է, այն պատճառով արդեւ, որ նա
նախապաշարված է հրէաների դէմ, կամ այն
պատճառով, որ հրէաների դէմ արշաւանքը արդէն
դրաղեցնող միջոց կը ծառայէ աղաւաղական դա-
ղափարների տարածման դէմ: Նորերումս պատա-
հած մի փաստ ըստ երեւոյթիմն հաստատում է
այդ կարծիքը: Կայսերական կանցլէրը նորերումս
չնորհաւորական նամակով դիմեց Օտտօմէլի ըն-
տրողական մասնաժողովին, որը պրուսական լան-
տաղի համար կանդիդատ ընտրեց պալատական
քարոզիչ Դեմօկրիին, որը կրօնական սօցիալիզմի
հիմնադիր և հրէաների դէմ գլխաւոր հաւածանք
բարձրացնողն է: Նախկին ընտրութիւնների ժա-
մանակ պ. Դեմօկրի ապարդիւ կեաւ որպէս կա-
նդիդատ հինգ ընտրողական շրջանների, որոնց
մէջ մեծամասնութիւնը պահպանողականներն էին:
Կազմում, նա, բացի դրանից, յանձնարարական-
ներ ունէր իշխան Բիսմարկից, և, այնու առեւ-
նային, խայտառակեցաւ ընտրութիւնների ժա-
մանակ:

— Բերլինի «Post» լրագրին վիէնայից հեռա-
գրում են, սեպտեմբերի 30-ից: Երէկ երեկոյեան
Պրէսուրդում նորովեցան հրէական անկարգու-
թիւնները, բայց չնորհիւ զօրքերի յարմար ժամա-
նակին հասնելուն, այնպիսի մեծ չափեր չը ստա-
ցան, որպէս անցեալ հինգշաբթի, երբ հրէական բաղ-
մաթիւ պահանջներ կողորովեցան և կատարած
ամբողջ ջարդուիշուր արեց անհաղորդ պատու-
հանները: Երէկ միայն երկու մասունքներ կողորով-
վեցան: Զօրքը սկսեց յարձակում գործել, որի ժա-
մանակ մի քանի մարդկանց վիրաւորեցին սուլին-

ներ հարուստներով: Անկարգութիւններին մաս-
նակցում էին գլխաւորապէս բեռնակիրները, ար-
հեստաւորները և ուսանողները: Ասում են, որ
անկարգութիւնները կատարվում էին առաջուց
կազմված պրանով և կալանաւորվածներից մի քա-
նիստ խոստովանեցան, որ անյայտ անձինքնե-
րից իւրաքանչիւր 30 կրկնէր էր ստանում «կե-
ցէ Խառօչի» աղաղակելու համար: Բազմաթիւ
հրէաներ Պրէսուրդից վիէնա էին փախչում:
Պէշտի և տեղական լրագրիւնները պահանջում են
որ պաշարողական դրութեան մէջ դնեն Պրէսուրդ
քաղաքը:

— Հալաւի ընկերութեանը կայրէից հեռա-
գրում են, սեպտեմբերի 28-ից: «Այսօր առաւօ-
տեան լուր տարածվեցաւ որ գեներալ Ուէլ-
սէլ երկուշաբթի դէպի Անգլիա է ուղեոր-
վել, բայց այդ լուրը անհիմն յայտնվեցաւ:
Գեներալ Ուէլսէլ չի վերադառնալ Անգլիա, մի-
նչ որ չեն վճռվի գլխաւոր հարցերը: Այդ բոլոր
հարցերը վճռելու համար երկու շաբաթից աւելի
ժամանակ կը պահանջվի:»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց «Наблюдатель» ամսագրի սեպտեմբե-
րի տետրակի մէջ բարձր կօրք տպել է Լինա
Մօրգէնշտէրն գերմանուհի նշանաւոր կնոջ կեն-
սագրութիւնը: Այդ տիկինը, որ դեռ կենդանի է
և այժմ 52 տարեկան է, ապրում է Բերլինում:
Նա պատկւած է և ունի հինգ զաւակ, որոնցից
երկու աղջիկ և երեք տղա: Աղջիկներից ամեն
մինը, բացի իր անձնական ձեռքը զարդացնելուց,
այնպէս է դաստիարակված, որ ընդունակ է պա-
րագլ տան տնտեսութեամբ: Տիկին Մօրգէնշ-
տէրն իր ամբողջ կեանքը նուիրել է կանանց
հարցին: Նա իր տանը հոգում է իր երեխաների
մասին, ինքն տան տնտեսութիւն է անում, ինքն
ճաշ պատրաստում, խոհանոցում է զբաղվում,
և գտնում է ժամանակ գիտութիւններով պարա-
պել: Նա քանի տարի է արդէն խմբագրում է մի
լրագիր, որի նպատակն է կանանց իրաւունք-
ները պաշտպանել, իր կեանքի ընթացքում հրա-
տարակել է բազմաթիւ հ զի ն ա լ ո լ թ իւ Ն -
ն և ի, սկսած մանկավարժական գրուածներից,
բանտներին դրութեան վրա հեղինակութիւննե-
րից, մինչև խոհանոցի ձեռնարկը: Նա ժամանակ
է գտնում զբաղվել և հասարակական հարցերով
և հիմնել է բազմաթիւ հասարակական հաստա-
տութիւններ: Իր ծննդավայրում, Բրէսլաւ քա-
ղաքում, նա հիմնել է մի բարեգործական ըն-
կերութիւն, Բերլինում նա հիմնել է մի դպրոց-
խոհանոց, որտեղ կանայք և օրիորդներ, առաւօտ-
ները գործնական կերպով ուսանում են խոհա-
րի արհեստը, իսկ երեկոները դասեր են լսում ֆի-
զիօլոգիայի, ասոցիալազմութեան, քիմիայի և այլ
առարկաների վրա, որ ինքն Լինա Մօրգէնշտէրն
կարդում է նրանց համար: Բացի սորանից Լինա
Մօրգէնշտէրն հիմնել է Բերլինում օրիորդների
համար մի բարձրագոյն դպրոց, նա հիմնել է
նոյնպէս Գերմանիայի մայրաքաղաքում բանտնե-
րի համար մի ճաշարան, որտեղ տալիս են
ճաշ շատ էփան գինով, այն է 8 կօպէկով, և որ-
տեղ օրական ճաշում են մինչև 14,000 հոգի: Զբ-
պելը է մուսուլման և որ Լինա Մօրգէնշտէրն ինքն
հարուստ կին չէ և կարողանում է իր ընդարձակ
և բազմաթիւ գործունէութիւնը կատարել
խմբելով իր չորս կօպէ կապիտալիզմներին, ո-
րոնց նա դրոշմ է և առաջնորդում դէպի այդ
բոլոր հասարակաօգուտ գործերը: Լինա Մօրգէնշ-
տէրն իր օրը այն կինն է, որ չամ մասաւորապէս
զարգացած է, բարձր գիտութիւն է ստացած,
համ էլ ընդունակ լինել ինքն տան տնտեսու-
թեամբ զբաղվել, ինքն իր ձեռքով խոհանոցում
պարապել, և կրթել ու դաստիարակել իր երեխա-
ներին: Եւ նա ինքն իր մէջ միացնում է այդ բո-
լոր յատկութիւնները. կին-տնտես, կին-խոհարար,
կին-մայր, կին-դասուսու, կին-գրող, կին-խմբա-
գիր, կին-հասարակական գործող:

Ձարմանալի ժողովուրդ է ներկայացնում մեզ
խալանդիա կղզու ժողովուրդը: Այդ երկրում 7
տարեկան բոլոր մանուկները գիտեն կարգաւ
գրել և հաշուել: Դուրեղեղայ ամենաքաղաք ձկնորս-
ներից մէկին չէք գտնի, որ ստացած չը լինէր
սկզբնական կրթութիւնը: Խալանդիայում ամեն
մայրը ուսուցիչ է, ամեն տունը՝ դպրոցի տեղ է
ծառայում: Ամենամօտ եկեղեցու ծխական քահա-
նան հոկում է մանուկների ուսման առաջադի-

մութեան վրա և այն երեխան որ ծոյլ է, կամ
բաւարար ժրջանութիւն չէ ցոյց տալիս ուսման
մէջ, նա զրկվում է դրաւոր վկայականից, կօն-
ֆիրմացիայից: Եթէ այդ հեռու հիւսիսային երկ-
րում հարցնէք մի մանուկին ով է եղել նրա ու-
սուցիչը, ով է սովորեցրել նրան երկրի աշխար-
հագրութիւնը, — նա ձեզ կը պատասխանի «Իմ
մայրս»: Այդ համակրելի ժողովուրդը նշանաւոր
է իր պարզութեամբ և բարձր բարոյականու-
թեամբ: Մի քսան և հինգ տարեկան երիտասարդ
խալանդացի աստուածապաշտ, ազնիւ է և այն-
քան պարզ ու համեստ է, այնքան մեղմ բնաւո-
րութիւն ունի, որքան մի մանուկ: Խալանդիա
կղզում լաված բան չէ որ պատահէ աւազակու-
թիւններ, մարդասպանութիւններ կամ գողութիւն-
ներ: Այդտեղ չը կայ ոչ ոստիկանութիւն, ոչ
բերդ: Վերջին 100 տարվայ ընթացքում այդ կղզ-
ու բնակիչներից ոչ ոք չէ յիշում որ մէկը մի
որ և է յանցանք գործած լինէր այդ բարեկիրթ
և խաղաղ երկրում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 27 սեպտեմբերի: Կայսե-
րական «Державы» նաւը եմթաղված է
եկող տարի Գլաւգօ ուղարկել նոր մեքենայ
գնելու համար: Սեպտեմբերի 24-ին թա-
գաւոր Կայսրին ներկայացան Հեռագիրների
նոր կառավարիչ Բեզակ և նահանգապետ-
ներ. Նիժնեգորոյի Բարանով, Պսկովի Պրու-
չենկո, Արխանգելի Պօլտօրացի, Խարկովի
Կալաշնիկ և Օդեսայի քաղաքապետ Մա-
րազլի:

ԽԱՐԿՈՎ, 27 սեպտեմբերի: Կալանաւոր-
վածների բօտայի մէջ պահվող Բէլոուսով
մորթեց վերատեսչին, որի դէմ ռս ու-
նէր:

ՕԴԵՍՍԱ, 27 սեպտեմբերի: Խալանդիա
շրջենաւի հետ մեծ քանակութեամբ փախ-
են ուղարկում Ալեքսանդրիա: Այստեղի ար-
դիւնաբերողները մտադիր են Ալեքսանդ-
րիայի մէջ փայտի պահեստներ բանալ:

Կ. ՊՈԼԻՍ, 27 սեպտեմբերի: Բ. Գուռը
հրամայեց նահանգապետներին հսկել, որ
այն եկամուտները, որոնք նշանակված են
Ռուսաստանին պատերազմական ծախսեր հա-
տուցանելու համար, ուրիշ բանի համար
գործ չածվեն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 27 սեպտեմբերի: Ֆի-
նանսների մինիստրութիւնը հրքում է լրագ-
րական լուրերը, իբր թէ մինիստրութեան
կազմված խորհուրդը տեղական հարկա-
յին վարչութիւնները վերակազմելու հա-
մար անհամաձայն է առանձին մասնա-
ժողովի հետ Կոստանովի նախագահու-
թեամբ: Ընդհակառակը այդ խորհուրդը
Կոստանովի մասնաժողովի համար մանրամա-
սին նիւթեր կը պատրաստի Ֆինանսային
վարչութիւնների վերակազմութեան վերա-
բերութեամբ: Մինիստրութիւնը մտադիր է
աւետարական տուրքերի որոշելու վրա հսկո-
ղութեան պակասութիւնների առաջն առ-
նել, կարգ որոշել ձրիապէս անցնող կաշե-
րից տուրքեր վերցնելու համար, միաց-
նել նահանգական ֆինանսական վարչու-
թիւնները, մտցնել նրանց մէջ խորհր-
դակցական ձեւը, և ֆինանսական վար-
չութիւններին յանձնել ապառիկներ հա-
ւաքելը, ազատելով այդ գործից պօլի-
ցիային:

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 27 սեպտեմբերի: «Пра-
вн. Вѣстн» լրագրը հաղորդում է մի-
նիստրների մասնաժողովի նախագահ Բէյ-
տերն, վերադառնալով արձակուրդից, նորից
սկսեց վարել ֆինանսների մինիստրի պաշ-
տօնը: Մինիստրը բացատրում է ֆինանսա-

կան վարչութիւններ վերակազմութեան համար ֆինանսներ մինստրութեան մէջ գումարված խորհրդի յարաբերութիւնները դէպի կօխանովի մասնաժողովը: Նրանց աշխատանքները միմեանց չեն փաստում: Խորհուրդի աշխատանքները նախապէս ոչինչ չը վճռող մի նախագիծ կը տան, որի հիմունքները մինչև կատարեալ մշակումը կը քննվեն կօխանովի մասնաժողովից և կը համեմատեցնվեն նրա աշխատանքներին: Խորհուրդի աշխատանքները միայն կը թեթեւացնեն մասնաժողովի աշխատանքները: ֆինանսական հարցի վերաբերութեամբ: «ГЛОСОБ» լրագիրը հարգողում է. Զերինգովի ծխախոտագործները խնդրում են փոքրացնել բանդերօրները վճարը մախորկայի, նոյնպէս և բէկունի և շվիցենտի համար: Ենթադրված է այդ խնդիրքին բաւականութիւն տալ:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԴ, 27 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ. 87 կ., երկրորդ 92 ռ., երրորդ 91 ռ. 5 կ., չորրորդ 90 ռ. 12 կ., հինգերորդ 90 ռ. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 212 ռ. 75 կ., երկրորդ 206 ռ. 26 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ռ. 62 կ., երկրորդ 89 ռ. 75 կ., երրորդ 89 ռ. 75 կ., ոսկի 8 ռ. 21 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լժնգոնի վրա արժէ 24,09 պէսա, Ռուսաց 100 ռուբլ չամբուրդի վրա արժէ 206 մարկ, ֆարիզի վրա 253 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը բաւական ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւետ: Այդ թէյից ԱՆԳՈՒԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէյ ուրիշ տեղը Օրինակ. Լաւ ԿՈՆԳՈ թէյ 1 ռ.—1 ռ. 20 կօպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ռ. 40 կ., հիանալի ՄՈՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ. 50 կ., գեղեցիկ ԿԱՅԱՍՈՒ թէյ 1 ռ. 80 կ. և ամենալաւ ֆուլ-չու-ֆու թէյ 2 ռ. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻԶՆԵՐ ամբողջ Անգրիոփասի համար, շփալադ ֆրայ, Շեփիլդի ԳԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԳԱՌԻ, ԲԵՎՈՒՎԵՆԵՐ ՎԵՐԻ, ԹԱՄԲԵՐ Բարնբերի, Կօլմանի նըշըսայ, ԱԼԲՈՒՆԵՐ Շփարցի կէս գնով: ԱՆԳՈՒԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ, ԹԻՖԼԻՍԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆԻՈՒ ԳԱԼԼԵՐԷՑՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:

47—100

ՀԱՆՈՒԱԲԱՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՐԿԱՆԵԱՆ ՀԱՅՕՐԻՈՐԴՅՈՒՆ ԳՊՐՈՑՈՒՄ աշակերտութիւնների ԸՆԴՈՒՆՆԵԼ սկսվում է սեպտեմբերի 14-ից և կը շարունակվի մինչև 25-ը: Հասցեն՝ Լազարեվսկի փողոց, տուն Մէլիք-Շահապարեանցի: Տեսուչ զարդի՝ Կարապետ ԹԵՄՈՒՐԱՋԵԱՆՑ

Յանձնուեցաւ մամուլին մեր «ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ» ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ ԴԱՍԱԳԻՐԲԸ
ԵՒ ԼՅՍ ԿՐ տեսնի մինչև ամսիս վերջը:
Յ. Նազարեանց

ՐԺՇԿԱՊԵՏ ՐԷՑԻՍ վերադարձաւ Թիֆլիս: ՍԶԳԱՑԱՆՈՎ հիւանդների ընդունելութիւնը առաջվայ պէս: Արեւելայ-նայա քուչայ (Դավիթովսկայա փողոցի մօտ) տուն № 17:
3—3 (1)

ԴՕԿՏՈՐ Ա. ԲԱԲԱՅԵԱՆԸ Միայն ամսոյ 15-ից կտրող է հիւանդներ ընդունել, առաւօտները ժամը 9—11, իւր նախկին բնակարանում: Սօջակ, Սերգիեվսկի փողոց, Բայրիդուրովի տանը:
10—10

ՆԱԽԻՆ ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿՈՂ
«Гусан» շաբաթագրի, Խման ֆելիտայից ՏԵՐԵՎԵՎՍԿԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԱՎԵՐՈՒՄ ԵՒ ՍՎՈՎՈՎՈՒՄ ԵՒ ՍՈՒՄՈՒՄ
Նա յանձն է առնում Անգրիոփասի բոլոր ԴԱՂԱՍՏԱՆԱԿԱՆ հիմնարկութիւնների մէջ թէ քաղաքական և թէ քրեական ԳՈՐԾԵՐԻ պաշտպանութիւնը: ՀԱՍՑԵՆ. Թիֆլիս, Саперная (Սապերնայա) փողոց, № 5.
8—10

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
սիստեմատիքական ընթացք
Գրիգորի վարձեկան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մասն առաջին (ամբողջ թուեր) Մամուլի տակն է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կտորակ թուեր և երրորդական կանոններ):
Գինն է 40 կօպ.
Ուսումնարաններին զիջում 20%:
Ծախվում է Վ. Շահիբզադեանի լրագրական գործակալութեան խանութում:
Օտար տեղերից զիջում են այս հասցեով: Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

ԲԱՅՅԻ
ԽԱՄՍԱՅԻ
ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից
Թիֆլիսում վաճառվում է
«Մշակի» խմբագրատանը.— Կենտրոնական գրադաճառանոցում:
Միլիմանովի տանը № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի «Կովկասեան գրադաճառանոցում»:
Պ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում:
Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետեւեալ հասցեով:
ТИФЛИСЪ. Редакция «Мшакъ» РАФФИ.

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ երկար ժամանակ ուսուցչութեամբ է պարապել, ցանկանում է ունենալ ՄԱՍՆԱՌՈՐ դասերը ընտանիքներում, զիջաւորապէս ՀԱՅԵՐԷՆ ԼԵՂՈՒՅԻ, ԹԼԻԱԲԱՆՈՒԹԵՆԻՅ Լ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ:
Պայմանները կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:
8—10

Въ Редакции газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
«ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ
ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԵՆԱՑՈՒՄ
L'ORIENTAL
ՖԻԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԻՔԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:
«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:
«L'Oriental» թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:
Գրվել կարելի է «ՄՇԱԿԻ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիենայում գիմել-լով հետեւալ հասարակ հասցեով: Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

ՄԻՋԻ ԲՈՂՈՑ, ԿԱԹՈՂԻԷՍԿԱՅԱ ՓՈԳՈՑԻ ԱՆԿԻԸՆ № 13.
Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՑԻ ՄԵԿԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 Ր., չամբուրդներ 250—25 Ր., սակիջամներ 1. 30—12 Ր., սուսն դուկն եր ճանապարհի 6—35 Ր., մարաններ (погребы) 6—25 Ր., սա մօ վարներ 60 կ.—1.25 ֆունտը, կուսունի պղնձ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ու մի վալնի կն եր մրամօրնի 38 Ր.—75 Ր., հրացաններ երկու լուսանի 6—32 Ր., ու վոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 Ր., պատրաններ. (գուլաններ) ընդօլկերի, սեղար Ռէնգարդի ֆարիկից. պապիրոս և թամբաքու Կուշնարովի գրիզի պապիրոսի. 5,000 ֆունտ ԹԵՑ (չայ) եղ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիթ. (սուխար չայու և կաֆէ) Լինէմի. Կօֆէ Լինէմի և Միլիէյանի. Պետերբուրգում 40—1 Ր. 25 կ. հայերին ամենայն տեսակ 28 կ.—240 Ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և դարեվրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пучъ), պապրոսներ սամուլարի և չայու, դանակ չանդալ գանազան ֆարիկաների 1 Ր. 20 կ.—25 Ր. դուլթուր. գրչակրներ 1 Ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 Ր., դանակ հացի 20 կ.—1 Ր., հատը, կուսունի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կարելու մաշիւնայ. Անգլիական ու թուեր, Բրիտանիկ չայնիկներ, կաֆէ-նիկներ ամենայն տեսակ, Չադաքներ կաֆէի համար, ֆիլտեր—Չուր մաքրելու, կրակում կարելէն 18 կ., վաք ֆրանսիայի ծակոյ, Թուղթ փոշու, կանվիլուներ, սուրգուշ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակր, քարտախոտակ, Թանաք, Թանաքամաններ, պրեսպապիկներ, գրչակր սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի և բրիտանիկ դուլթուր 1—50 կ. մինչև 12 Ր., և չայու 45 կ.—5 Ր., չու-միչէք 45 կ.—5 Ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 Ր. ջուխտ, պր-սապրչաններ վարչակու, Ռեզիւնի ԿԱՐՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկրէ, գուտապերչուլի և փայտէ, չուսկաններ գլխի, շորի, սապիկի, պոլի և կարտի համար. չուլքի թէյ (бумага) մատկի կօճի և շալէ (гаусъ) ֆէլ-չապիք մարդկերանց և կանանց, պրոմաններ, քիսաններ, պապիրոսի ամաններ և մանր գորանտերիկնի սալանքներ, սապրն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտալէտ ջրեր, պուգրա, Կլիցերին ջրի քաջախ, հոտալէտ պարաչոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն:
Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցնելալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻԲԱՅԷԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍՍԵԱՆՑԻ պահեստում: (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.
Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով: ТИФЛИСЪ Михаилу Н. Теръ-Никогосову.
144—180
ՄԻՋԻ ԲՈՂՈՑ, ԿԱԹՈՂԻԷՍԿԱՅԱ ՓՈԳՈՑԻ ԱՆԿԻԸՆ № 13.